



ԲԱՆԱԽՈՍ

ՄԱՅԻՍԻ 21, 1998 թվ.

ԹԻՎ 17

Հ Ի Ն Գ Ե Ա Բ Թ Ի . Մ Ա Յ Ի Ս Ի 2 1

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴԻ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱ

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆՅԱՆԻ ՀՀ ԱՐՏԱԲԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ



Այսօր աշխարհն ակամատես է ու մասնակից նոր համակարգի ձևավորման: Չկա նախկին երկրներ համակարգը, այն փլուզվել է: Ոմանց թվում է, թե նոր համակարգն արդեն ձևավորվել է, բայց իրականում այն գոյություն չունի: Իրոք, այսօր մենք չգիտենք միաբերել, թե բազմաբերել կամ, ընդհանրապես, ինչպիսի համակարգում ենք ապրում:

Պատմությունն ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ յուրաքանչյուր հատկանշական պատերազմից հետո տեղի են ունենում որոշակի գործընթացներ: 19-րդ դարի սկզբներին Նապոլիոնի արշավանքներից հետո, երբ արդեն կասեցվեցին Ֆրանսիայի էրապանսիոնիստական նկրտումները, Վիեննայի կոնգրեսում, փաստորեն, հաղթական կողմը ձեռնամուխ եղավ երկու հիմնական գործողությունների: Առաջին. ստեղծվեց ուժերի նոր հավասարակշռություն. Ֆրանսիայի կողմից գրաված տարածքները վերադարձվեցին կամ վերաբաշխվեցին, սահմանափակվեցին Ֆրանսիայի հզորությունը ու ներուժը: Երկրորդ. ստեղծվեցին նման իրադարձությունների կրկնությունը բացառող նոր մեխանիզմներ, որոնք և ապահովեցին խաղաղությունը: Ստեղծվեց, ինչպես հայտնի է, քառակողմ այլաճա, և դրանով հաստատվեց, այսպես կոչված, Եվրոպական

ներդաշնակությունը, որը Եվրոպային, որոշ շեղումներով տվեց քիչ- թե շատ խաղաղ պայմաններ:

Նույն երկու գործընթացները կրկնվեցին 19-րդ դարի վերջին, երբ, հիմնականում Գերմանիայի վերամիավորման հետևանքով, խախտվել էր Եվրոպայում ուժերի հավասարակշռությունը: Առաջին համաշխարհային պատերազմից հետո հաղթանակած կողմը, փաստորեն սանձարժեց Գերմանիային, նրա օկուպացրած տարածքները վերաբաշխվեցին, ստեղծվեցին նոր մեխանիզմներ՝ նման իրադարձությունները բացառելու նպատակով: Ստեղծվեց Ազգերի լիգան՝ որպես նման մեխանիզմ, որը չաշխատեց տարբեր պատճառներով:

Նույնը տեղի ունեցավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Նույնպես Գերմանիան, փաստորեն, սանձազերծվեց, նրա օկուպացրած տարածքները վերադարձվեցին: Գոյացավ ուժերի նոր հավասարակշռություն և ստեղծվեցին նոր մեխանիզմներ, այս անգամ շատ ավելի ամուր և կայուն, ինչպիսիք են ՆԱՏՕ-ն, Միավորված ազգերի կազմակերպությունը, նաև՝ ֆինանսական բազմաթիվ կազմակերպություններ, որոնք իրոք բերեցին կայունություն և խաղաղություն հաջորդ 45 տարիների ընթացքում:

«Այսօր մենք չգիտենք միաբերել, թե բազմաբերել կամ, ընդհանրապես, ինչպիսի համակարգում ենք ապրում:»

Նույնը տեղի է ունենում այսօր՝ սառը պատերազմի ավարտից հետո: Չնայած որևէ կրակոց չեղավ, սակայն, սառը պատերազմը, իրոք, պատերազմ էր: Երբ հին համակարգը փլուզվեց, տարածքները, որոնք կառավարվում էին սովետների կողմից, «վերադարձվեցին» և դարձան անկախ պետություններ: Արդյունքում այսօր ձևավորվում է նոր համակարգ:

Ինչո՞վ է տարբերվում նոր համակարգի ձևավորման այս գործընթացը նախորդներից: Նախորդների պարագայում պատերազմն ավարտվում էր կապիտուլյացիայով: Գրա հետևանքով հաղթական կողմի համար շատ հեշտ էր մեկ օրվա, շաբաթվա կամ մի քանի ամսվա ընթացքում այդ գործընթացները հասցնել իրենց ավարտին: Սառը պատերազմը, մյուս կողմից, ավարտվեց առանց որևէ կողմի կապիտուլյացիայի: Խորհրդային Միության ժառանգորդը՝ Ռուսաստանը, պահել է իր ողջ տնտեսական և ռազմական ներուժը: Հնարավոր չէ Ռուսաստանի հետ վարվել այնպես, ինչպես անցյալում վարվում էին Գերմանիայի հետ կամ Ֆրանսիայի հետ:

Այսօր անհրաժեշտ է կիրառել նոր մեթոդներ և մեխանիզմներ նոր համակարգի ստեղծման համար: Եվ իրոք, այսօր տնտեսական և քաղաքական մակարդակներով այդ գործընթացներն ընթանում են: Միջազգային արժույթային հիմնադրամի, Համաշխարհային բանկի լծակներով, վարկերի տրամադրմամբ, բարեփոխումների իրականացման որոշ պարտադրանքով, ինչպես նաև ՆԱՏՕ-ի ընդարձակման, ԵԱՀԿ-ի շրջանակներում ինչ-որ նոր կառույցների, մեխանիզմների ստեղծման, ինչպես նաև սպառազինությունների կրճատման միջոցով ջանքեր են գործադրվում նոր համակարգի ձևավորման նպատակով: Այս գործընթացը երկարատև զարգացում է ապրելու, որովհետև, ինչպես ասացի, չկա

կապիտուլյացիայի կողմ և հնարավոր չէ պարտադրել ինչ-որ լուծում: Այսօր պայքար է գնում, քե այդ ձեվավորվող, համակարգը, որը, ըստ իս, կամբողջանա միայն 21-րդ դարի սկզբին, կլինի միաբևեռ քե բազմաբևեռ: Մի կողմը՝ հիմնականում, Ռուսաստանը և Չինաստանը, պնդում են, որ այն լինի բազմաբևեռ կայուն համակարգ, որի բևեռներում կլինեն Ռուսաստանը, Չինաստանը, Եվրամիությունը և Միացյալ Նահանգները: Մյուս կողմից ամերիկյան մտնեցումն է, որ միջազգային հաստատությունների միջոցով հնարավոր է կառավարել նոր համակարգը առանց հաստատելու միաբևեռությունը կամ բազմաբևեռությունը: Բայց այստեղ պորբլեմն այն է, որ կայունության և խաղաղության ապահովման այսօրվա նոր մեխանիզմները փորձ է արվում ստեղծել այն նույն կառույցների միջոցով, որոնք նպաստեցին համայնավար համակարգի փլուզմանը: Եվ որովհետև այդ կառույցները հիմնականում կրում են Միացյալ Նահանգների ազդեցությունը, բավականին անընդունելի իրավիճակ է ստեղծվում Ռուսաստանի համար:

Այսօր պայքարը դեռ շարունակվում է: Այն, քե ինչպիսի՞ համակարգ կձևավորվի մեզ համար անորոշ է, ինչը լուրջ բարդություններ է առաջացնում մեր արտաքին քաղաքականության մտնեցումների ձևավորման համար:

Այն քանից հետո, երբ անհետացան երկու հզոր մագնիսական ուժերը, որոնց շուրջ, փաստորեն, պտրտվում էին արբանյակային պետությունները, տեղի ունեցավ մի նոր, բնական դասավորում: Այսօր նոր համակարգեր են ստեղծվում, որոնք ներառում են նույն պետությունները: Ամենակարուկ դասավորությունը տեղի է ունեցել մեր տարածաշրջանում քանի որ մենք գտնվում էինք սառը պատերազմի առճակատման սահմանում:

«Այսօր անհրաժեշտ է կիրառել նոր մեթոդներ և մեխանիզմներ նոր համակարգի ստեղծման համար:»



Վարդան Օսկանյանը ծնվել է 1955թ. Միրիայի Հալեպ քաղաքում: Ավարտել է տեղի Հայ Ընդհանուր Բարեգործական Միության դպրոցը:

1979թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը՝ շինարար-ինժեների մասնագիտությամբ, ապա մեկնել է Միացյալ Նահանգներ շարունակելու ուսումը Բոստոնի Թավթ համալսարանում, Մասաչուսեթսի նահանգ, ուր այնուհետև աշխատել է մի շարք շինարարական ընկերություններում:

1986թ. քաղաքական գիտությունների մագիստրոսի աստիճան է ստացել Հարվարդի համալսարանում, իսկ 1990թ. Միջազգային հարաբերությունների մագիստրոսի աստիճան՝ Բոստոնի Ֆլեթչերի Իրավունքի և դիվանագիտության դպրոցում:

1990թ. հիմնադրել է "Հայկական միջազգային ամսագիր" ("AIM") և եղել է նրա խմբագիրը:

1992թ.՝ վերադառնալով Հայաստան, աշխատանքի է անցել Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում՝ ստանձնելով նախ Սերժավոր Արևելքի երկրների վարչության պետի տեղակալի, ապա՝ ԱՄՆ-ի և Կանադայի վարչության պետի պաշտոնները: 1994թ. նոյեմբերին նշանակվել է Հայաստանի արտգործնախարարի տեղակալ, իսկ 1997թ. հունվարին՝ նախարարի առաջին տեղակալ:

1994թ.-ից գլխավորում է Հայաստանի պատվիրակությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման բանակցություններում:

1998թ. ապրիլին նշանակվել է ՀՀ արտաքին գործերի նախարար:

Ամուսնացած է, ունի երկու որդի:

Տիրապետում է անգլերենին և արաբերենին, գիտի ֆրանսերեն և ռուսերեն:

Այս համակարգը կամ ենթահամակարգը բաղկացած է Կովկասի երեք հանրապետություններից, ինչպես նաև Ռուսաստանից, Իրանից, Կենտրոնական Ասիայի և ԱՊՀ մյուս երկրներից: Նման համակարգում մի երկրում որևէ իրադարձության զարգացումը անպայմանորեն իր դրական կամ բացասական հետևանքն է ունենում մյուս երկրների վրա: Վերցրեք թվարկածս ցանկացած պետություն և պատկերացրեք, թե ինչպես է այնտեղ տեղի ունեցող որևէ իրադարձություն ազդում մյուսների վրա: Ռուսաստանում այսօր որևէ տնտեսական ճգնաժամ իր լուրջ հետևանքներն է ունենալու Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում: Գարաբաղյան հակամարտությունն ազդեցություն է ունենում Թուրքիայի, Ադրբեջանի, Վրաստանի և այլ երկրների վրա: Նավթային խնդիրները և շատ այլ հարցեր բազմաթիվ թելերով իրար են շաղկապում այս երկրները:

Որպես կանոն քաղաքագիտության մեջ համակարգերը կարող են լինել կայուն կամ անկայուն: Տասնիններորդ դարի սկզբին Վիեննայի կոնգրեսում ստեղծվեց մի իրոք կայուն համակարգ: Կար ուժերի հավասարակշռություն, կար շահերի համընդհանուր մոտեցում, կային մեխանիզմներ, որոնք ապահովագրում էին պատերազմների դեմ: Նույնը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո էր: Նման կայուն համընդհանուր համակարգը գոյատևեց քառասունհինգ տարի:

Այսօր մեր այս ենթակառուցում, կովկասյան շրջանում չկան այդ կայունության մեխանիզմները: Չկա մի այնպիսի տարածաշրջանային կազմակերպություն, որն ընդգրկի բոլոր այս երկրները: ԱՊՀ-ում մասնակից են բոլորը, բացի Թուրքիայից ու Իրանից: Իրանը չի հանդիսանում Սևծովյան տնտեսական համագործակցության մասնակից, ինչպես նաև չի անդամակցում ԵԱՀԿ-ին: Տնտեսական համագործակցության կազմակերպությունում, որտեղ մասնակցում են Թուրքիան, Իրանը, Կենտրոնական Ասիայի պետությունները, չեն մասնակցում Հայաստանը, Վրաստանը և մյուսները: Չկա այսօր համապարփակ մի կազմակերպություն, որն իր մեջ ներառի տարածաշրջանի բոլոր պետությունները, որտեղ կլինեն ընդհանուր շահեր, կքննարկվեն ընդհանուր խնդիրներ, կգտնվեն ընդհանուր լուծումներ: Սա բացակայում է և չկա կայունացնող մեխանիզմ:

Ենթահամակարգի երկրորդ խնդիրն այն է, որ նրա ներսում գոյություն ունի շահերի հստակ բախում: Եթե այսօր վերցնենք եվրոպական ցանկացած փոքր ենթահամակարգ, կտեսնենք, որ այնտեղ կա ինչ-որ շահերի համերաշխություն, էքնիկական նմանություն և այլն: Բայց մեր տարածաշրջանում այսօր դա բացակայում է: Քաղաքական շահերը բոլորովին տարբերվում են, և մեզանից յուրաքանչյուրը կարծեք թե տարբեր ուղղություն է վերցրել: Սա նույնպես ապակայունացնող գործոն է: Այնպես որ կայունացնող մեխանիզմները այս ենթահամակարգում բացակայում են:

Մինչդեռ ապակայունացնող գործոնները բազմաթիվ են: Դրանք կարելի է բաժանել չորս հիմնական խմբերի: Առաջինը կառուցվածքային ապակայունաց-

նող գործոններն են, որոնք հիմնականում վերաբերում են այս համակարգի երկրների ներքին քաղաքական կառուցվածքին: Այսօր այս երկրներից յուրաքանչյուրը իսկապես գտնվում է սահմանադրական ճգնաժամի մեջ: Մեր բոլորի սահմանադրություններն այսօր ունեն օրինականության լուրջ խնդիրներ, չեն ընդունվում բոլորի կողմից, կան հակասություններ, և դա առաջացնում է լուրջ քաղաքականներ:

Ռուսաստանից մինչև Հայաստան, ներառյալ բոլոր ԱՊՀ երկրները, խորհրդարաններում չի ձևավորվել ներքին քաղաքական ուժերի բաժանումը: Նույնիսկ Թուրքիայի նման երկրում, որն արդեն ունի 80 տարվա պետականության կառուցման փորձ, նույնպես, թեև, չի ձևավորվել մի այնպիսի համակարգ, որը նպաստի այդ երկրի կայունությանը: Եվ այս բոլորն իսկապես այս տարածաշրջանի համար բավականին լուրջ ապակայունացնող գործոններ են:

Երկրորդ՝ քաղաքական մակարդակն է: Նշեցի, որ սառը պատերազմն ավարտվել է, բայց դժբախտաբար դեռևս շահարկվում է սառը պատերազմի իրադրությունը և իդեոլոգիան: Դա արվում է տարբեր նպատակներով, տարբեր քաղաքական շահեր են հետապնդվում: Բայց մեր ռեզիմում դա, փաստորեն, առաջացնում է ուժերի բեռնացում: Չկա սառը պատերազմ, բայց դեռևս Արևելք-Արևմուտք կատեգորիաներով է մտածվում: Երկրները անվանվում են պրոարևելյան-պրոարևմտյան: Սա այս ռեզիմում առաջացնում է լուրջ բեռնացում, որը չի նպաստում տարածաշրջանի կայունությանը:

Երրորդ՝ տնտեսական մակարդակն է, որն, ըստ իս, առավելագույն կարևոր խնդիր է: Այստեղ խնդիրները գտնվում են տարբեր մակարդակների վրա: Առաջինը գործալ մակարդակն է: Տնտեսական անբավարար հիմնականում նկատի ունեն նավթի գոյությունը այս տարածաշրջանում:

Երկրորդ՝ նկատի ունեն այս երկրների տնտեսական անցումային վիճակը և նրանց ծանր տնտեսական վիճակի մեջ գտնվելը, որը լուրջ ապակայունացնող գործոն է: 1996 թվականին մենք տեսել, մեր մաշկի վրա ենք զգացել դրա հետևանքները: Այսօր ոչ միայն Հայաստանի ժողովուրդն է դժգոհում ծանր տնտեսական վիճակից: Սա նույնպես, փաստորեն, լուրջ ապակայունացնող գործոն է այս երկրներում:

Մյուսը՝ բնական պաշարների անհավասար բաժանումն է տարածաշրջանում: Այն հիմնականում դրսևորվում է նավթի մեծ պաշարներով Ադրբեջանում և Կենտրոնական Ասիայում ու դրա բացակայությամբ՝ մյուս երկրներում: Այդ երկրների կողմից նավթային գործոնի ոչ հնուտ և ոչ հավասարակշռված օգտագործումը լուրջ ապակայունացնող գործոն է մեր տարածաշրջանի համար:

Նավթային հարցում երեք տարբեր մակարդակներում լուրջ պրոբլեմներ են կանգնած: Գլոբալ մակարդակում այսօր լուրջ մրցակցություն կա ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Եվրոպական երկրների միջև՝ հնարավորին չափ մեծ բաժին ստանալ այդ նավթից: Եվ սա լուրջ մրցակցություն է առաջացնում: Այն նպաստում է նաև քա-

«Այսօր կովկասյան շրջանում չկան... կայունության մեխանիզմները: Չկա մի այնպիսի տարածաշրջանային կազմակերպություն, որն ընդգրկի բոլոր... երկրները:»

դարական գործոնի ուժեղացմանն ու բևեռացմանը: Արևելք-Արևմուտք մրցակցությունը առավելագույնս դրսևորվում է տնտեսական պայքարի մրցակցության մեջ՝ հիմնականում նավթային պաշարների նկատմամբ:

Մյուսը ռեգիոնալ խնդիրն է. նավթամուղերի և նաև Կասպիանի բաժանման խնդիրը: Սա ևս ապակայունացնող գործոն է, որովհետև այսօր լուրջ տարակարծություններ է առաջացրել Կասպից ծովի շուրջ գտնվող երկրների միջև՝ այդ ծովի կամ լճի պաշարները բաժանելու հարցի շուրջ: Մի կողմից Թուրքմենստանն է, Ռուսաստանը, Իրանը, մյուս կողմից՝ Ադրբեջանը և Ղազախստանը:

Առավել վտանգավոր է նավթամուղերը իրենց տարածքով անցկացնելու համար գոյություն ունեցող մրցակցությունը: Սա, իհարկե, բավական լրջորեն դրսևորվում է Վրաստանի քաղաքականության մեջ: Փաստորեն, Վրաստան-Ադրբեջան մերձեցումը զգում է շատ արագ: Հիմնական նպատակն է՝ ապահովել այդ նավթամուղի անցկացումը Վրաստանի տարածքով: Սա, ըստ իս, որոշ պրոբլեմներ կարող է առաջացնել Հայաստանի և Վրաստանի միջև: Վերջինս, փաստորեն, տնտեսական շահերի հասնելու նպատակով, որոշ քաղաքական հայտարարությունների կամ զիջումների է զգում: Սա նույնպես բավականին պրոբլեմներ է առաջացնում այս տարածաշրջանի համար:

Երրորդը տեղական մակարդակն է: Այսօր եթե իրոք նայենք բոլոր այն երկրներին, որոնք հարուստ են նավթով, բացառությամբ մի քանիսի, ապա դրանցում չկա ժողովրդավարություն: Որովհետև այնտեղ դրված է այդ հարստության տնօրինման ժառանգականության խնդիրը և դա ինքնարերաբար տանում է մենաախրության: Այսօր նավթային պաշարներով հարուստ նման երկրների 80%-ում մենաախրական համակարգեր են. ժողովրդավարության բացակայություն, մարդու իրավունքների ոտնահարում: Սա նույնպես ապակայունացնող գործոն է տարածաշրջանի համար:

Եվ վերջապես, էքնիկական հակամարտությունները՝ Ղարաբաղը, Աբխազիան, Օսեթիան, Մերձդնեստրը, Չեչնիան: Այս բոլորը նույնպես ամենաերևացող ապակայունացնող գործոններ են, որոնք այսօր գոյություն ունեն այս տարածաշրջանում և չեն նպաստում տարածաշրջանի խաղաղությանն ու կայունությանը: Առանց այս հակամարտությունների՝ բոլոր կողմերին բավարարող խաղաղ կարգավորման, հնարավոր չի լինելու հասնել երկարատև խաղաղության և կայունության այս տարածաշրջանում:

Ահավասիկ, այսպիսի իրավիճակում է գտնվում Հայաստանը՝ որպես այս ենթահամակարգի երկրներից մեկը: Եվ իրոք, մենք բավական ծանր վիճակում ենք: Ես թվարկեցի գլոբալ գործընթացները, որոնց հետևանքները մենք զգում ենք այստեղ: Նշեցի տարածաշրջանային այն խնդիրները, ապակայունացնող գործոնները, որոնք լուրջ հետևանքներ ունեն մեր երկրի տնտեսական և քաղաքական կյանքի վրա:

Ըարտեզի վրա նայելով, կարելի է տեսնել, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանը հայտնվել է երկի թե բոլորից ավելի ծանրագույն վիճակում: Մենք գանը-

վում էինք սառը պատերազմի երկփեղկվածության հենց առանցքում, որի փլուզումից հետո, փաստորեն, այդ դասավորությունները, նոր իրավիճակի ստեղծումը իր ամենածանր հետևանքներն է բողել մեզ վրա:

Մենք գտնվում ենք նաև քաղաքակրթությունների հակասությունների սահմանագծում: Ընչտ է, որքանով ևս չեն կիսում Մեմբլ Հանթինգթոնի այն տեսակետը, որ հաջորդ պատերազմը լինելու է ոչ թե գաղափարախոսական կամ տնտեսական, այլ քաղաքակրթությունների միջև՝ կրոնական լինի, թե էքնիկական, բայց այսօր մենք նաև գտնվում ենք հենց դրա սահմանագծում: Հայաստանով է, որ ավարտվում է քրիստոնեական աշխարհը և սկսում իսլամականը: Ես չեմ ուզում, իրոք, սա դարձնել առանցքային խնդիր, բայց սա մի հանգամանք է, որը նույնպես պետք է հաշվի առնենք, չբողենք, որ այն շահարկի այլ ուժերի կողմից:

Նայենք քարտեզին և մի պահ պատկերացնենք, որ մենք կորցնում ենք Չանգեզուրը: Երևի քարտեզի վրա չկա մեկ այլ երկիր, որ նման մի փոքր հողակտորի տեղաշարժով կարող է առաջացնել գեոպոլիտիկ, գեոստրատեգիկ նման փոփոխություն: Պատկերացրեք մի պահ, թե ինչ է կատարվում: Օրինակ, Աֆրիկայի ցանկացած երկրում նման տեղաշարժ եթե արվի, հավատացեք, որ այնտեղ որևէ լուրջ հետևանքներ չի կարող ունենալ: Նույնը՝ Եվրոպայում, Լատինական Ամերիկայում, Ասիական մայրցամաքում է: Բայց Հայաստանում մի այնպիսի իրավիճակ է ստեղծվել, որ նույնիսկ նման մի փոփոխություն, իրոք, փոխում է աշխարհաքաղաքական քարտեզը: Այսօր մենք գտնվում ենք նման իրավիճակում: Եվ այսպիսի իրավիճակում փաստորեն մեր առջև դրվում են արտաքին քաղաքականության հարցերը ճիշտ դնելու, ճիշտ լուծումներ փնտրելու խնդիրներ:

Մեր քաղաքականությունը ռեգիոնում պետք է հետապնդի վերոհիշյալ ապակայունացնող գործոնները վերացնելու նպատակ: Մենք մեր արտաքին քաղաքականությամբ պետք է փորձենք նպաստել տարածաշրջանի խաղաղությանն ու կայունությանը: Մեր տարածաշրջանային քաղաքականությունը պետք է հիմնվի հիմնականում վեց առանցքային կետերի վրա:

1. Մարդու իրավունքների և ժողովրդավարության հաստատումը տարածաշրջանում

Հայաստանը պետք է իր վրա վերցնի դրոշակակրի դերը այս տարածաշրջանում Մարդու իրավունքների և ժողովրդավարության հաստատման հարցում: Բայց դա անելու համար մենք նախառաջ պետք է կարգի բերենք մեր ներքին վիճակը: Մենք պետք է բարելավենք մարդու իրավունքների խնդիրները մեր երկրում, իրոք հասնենք ժողովրդավարության լիակատար մակարդակի, որպեսզի հնարավորություն ունենանք ազատորեն ջատագովել մարդու իրավունքների, ժողովրդավարության տարածումը տարածաշրջանում: Միայն դրան հասնելով էլ կկարողանանք լուծել այլ խնդիրներ՝ տնտեսական, քաղաքական, էքնիկական հակամարտությունները:

Նախագահի հետ խորհրդակցություններ են եղել, և ես կարծում եմ, որ Հայաստանում համապատասխան քայլեր կարվեն՝ այդ հարցերի կարգավորման

«Մենք մեր առաջ խնդիր պետք է դնենք և Փոքիից մինչև Մեղրի եկրոպական ստանդարտներով ավտոճանապարհ կառուցենք:»

համար: Կարծում եմ, որ հնարավորին չափ շուտ պետք է վերացնենք մահապատիժը, քրեական օրենսգիրքը համապատասխանեցնենք եվրոպական ստանդարտներին, լրիվ ազատություն տանք բոլոր քաղաքական կուսակցություններին, ապահովենք մամուլի ազատություն, բացառենք քաղաքականությանը գոյությունը և դրանից հետո դառնանք այս արժեքների ու սկզբունքների տարածման դրոշակակիրը տարածաշրջանում:

2. Տարածաշրջանի միասնական և հավասար տնտեսական զարգացում

Մեր քաղաքականությամբ պետք է նպաստենք տարածաշրջանի համահավասար տնտեսական զարգացմանը: Սա պետք է լինի մեր ռեզիմնալ քաղաքականության կարևորագույն խնդիրներից մեկը: Այսօր ընթանում են բազմաթիվ գործընթացներ, ստեղծվում է այսպես կոչված Մետաքսի ճանապարհը, քրեանարկումներ են զնում նավթամուղերի անցկացման շուրջ: Հայաստանը պետք է իր ակտիվ մասնակցությունը բերի այս խնդիրներին, որպեսզի կարողանանք մեր համապատասխան տեղը գտնել տարածաշրջանում:

Ես կարծում եմ, մենք մեր առաջ խնդիր պետք է դնենք և Փոքիից մինչև Մեդրի եվրոպական ստանդարտներով ավտոճանապարհ կառուցենք: Սա լուրջ ազգային խնդիր է, կապված է լուրջ ֆինանսական պրոբլեմների հետ, բայց դա պետք է լինի մեր քաղաքականության առանցքային խնդիրներից մեկը: Դրանով մենք կկարողանանք Հայաստանը դարձնել տարածաշրջանի կարևոր երկրներից մեկը:

3. Տարածաշրջանային կազմակերպությունների ուժեղացում և արդյունավետության բարձրացում

Մեր քաղաքականությունը պետք է նպաստի ռեզիմնալ կազմակերպությունների հզորացմանը, ուժեղացմանն ու ամրագրմանը: Պետք է նպաստենք, որպեսզի ԱԳՀ կառույցները դառնան իսկապես աշխատող: Պետք է նրապատենք բյուրոկրատական շերտի վերացմանը, կառույցների վերակառուցմանը՝ շեշտը դնելով տնտեսական համագործակցության վրա: Պետք է փորձել ստեղծել ազատ տնտեսական գոտի և անդամ պետությունները պետք է սկսեն տեսնել իրական տնտեսական շահ այդ համագործակցությունից:

Մյուսը Սևծովյան տնտեսական համագործակցությունն է: Այս կազմակերպությունում մենք նույնպես պետք է ունենանք ակտիվ մասնակցություն: Նախորդ վեց ամիսների ընթացքում Հայաստանը ստանձնել էր այդ կազմակերպության նախագահությունը: Պետք է հպարտությամբ ասեն, որ մեր նախագահության ընթացքում արտաքին գործերի նախարարները նախաստորագրեցին այդ համագործակցության նոր խարտիան, որով այն ավերակվում է կազմակերպության: Այդ խարտիան հաջորդ ամսվա /հունիսի/ 4-5-ին նախագահների մակարդակով արդեն կստորագրվի: Այդ կազմակերպությունը, փաստորեն, մի քայլ առաջ կգնա իր էֆեկտիվության և նոր կառույցների ստեղծման խնդիրներով: Պետք է մեր քաղաքականությամբ նպաստենք, որ ապաքաղաքականացվի այս կազմակերպությունը,

շեշտը դրվի տնտեսական համագործակցության վրա, ստեղծվի ազատ տնտեսական գոտի, դրանով նպաստելով նաև անդամ երկրների միջև գոյություն ունեցող քաղաքական խնդիրների վերացմանը:

4. Տարածաշրջանում սառը պատերազմի հոգեբանության վերացում

Սառը պատերազմն արդեն ավարտվել է, բայց այդ հոգեբանությունը դեռևս մնում է, և մենք պետք է մեր քաղաքականությամբ նպաստենք դրա վերացմանը: Դա հիմնականում շահագործվում է Ադրբեջանի կողմից: Նրանք, փաստորեն, ստեղծում են պրոռուսական-պրոամերիկյան ինչ-որ սպավորություն և Ադրբեջանը

ներկայացնում են որպես պրոամերիկյան կամ պրոարևմտյան պետություն, Հայաստանին անվանելով պրոռուսական: Մեր մոտեցումն այստեղ բոլորովին այլ է: Մենք գտնում ենք, որ սառը պատերազմի ավարտով վերացել է նաև այդ փիլիսոփայությունը: Չկան նման կատեգորիաներ: Մենք մեր

«Ինչքան էլ ասենք, թե ցեղասպանության ճանաչման խնդիրը մենք կարող ենք մի կողմ դնել, ... դա այնքան խորն է նստել մեր և թուրքերի հոգեբանության մեջ, որ մեր երկխոսության համար դա իսկապես լուրջ խոչընդոտ է: Եթե դա խոչընդոտ է, ուրեմն պետք է ձգտել այն վերացնել:»

քաղաքականությամբ պետք է հենվենք փոխընդման սկզբունքի վրա և, դրական հավասարակշռության սկզբունքից ելնելով, բոլորին թույլ տանք, որ հավասարապես ազդեցություններ գործեն և իրենց ներգործությունն ունենան Հայաստանի և տարածաշրջանի տնտեսական ու քաղաքական կյանքում: Ադրբեջանի մոտեցումն այլ է: Օրինակ, նրանց համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ նպատակ է հետապնդում, փաստորեն, հակակշռել Ռուսաստանի ազդեցությանը Ադրբեջանում: Մեր համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ գալիս է լրացնելու մեր երկկողմ ռազմական համագործակցությունը Ռուսաստանի հետ և կոլեկտիվ անվտանգության շրջանակներում մեր համագործակցությունը ԱԳՀ-ում: Մերը՝ համալրացման, Ադրբեջանինը՝ իրար հակադրելու սկզբունք է: Նրանցը բերում է րևոտացման, մերը՝ մերձեցման: Մեր քաղաքականությունն այս հարցում պետք է լինի բավական հետևողական:

5. Տարածաշրջանային խնդիրներում Թուրքիայի դրական մասնակցության խրախուսում

Մեր քաղաքականությամբ պետք է կարողանանք Թուրքիային ավելի դրականորեն ներգրավել տարածաշրջանի խնդիրներում և ստեղծել Թուրքիայի հետ հարաբերությունների մի նոր մակարդակ և դա դարձնել երկկողմանի ճանապարհ: Առայսօր, Թուրքիայի հետ մեր հարաբերությունները եղել են միակողմանի: Փաստորեն, Թուրքիան ենթարկել է մեզ շրջափակման, մերժում է հարաբերություններ ունենալ կամ դիվանագիտական հարաբերություններ հաստատել: Մյուս կողմից, մենք նպաստել, համագործակցել ենք Թուրքիայի հետ տարբեր բնագավառներում, հիմնականում՝ միջազգային կազմակերպություններում: Այս մոտեցումը, ըստ իս, դրական արդյունքի չի հանգեցրել: Եվ այսօր, մեր նոր քաղաքականությունը պետք է հիմնվի հավասարության սկզբունքի վրա: Սրա նպատակը այն չէ, որ մենք հակադրվենք Թուրքիային: Ընդհակառակը՝ պետք է նրան կարողանանք հավասար

րության սկզբունքով մասնակից դարձնել տարածաշրջանի խնդիրներին: Նույնը վերաբերում է մեր մոտեցմանը ցեղասպանության ճանաչման հարցին: Այդ խնդիրը մենք դնում ենք այսօր մեր արտաքին քաղաքականության օրակարգի մեջ: Մենք ասում ենք, որ Թուրքիայի հետ մեր երկխոսությունում ցեղասպանության ճանաչման հարցը պետք է ներառվի օրակարգի մեջ, և մենք դա պետք է քննարկենք Թուրքիայի հետ: Սա նույնպես չի հետապնդում Թուրքիային նախապայմաններ դնելու կամ հակադրվելու նպատակ, այլ հնարավորություն է տալիս երկխոսության միջոցով վերացնել հարաբերություններում գոյություն ունեցող խոչընդոտները և արգելքները: Ինչքան էլ ասենք, թե ցեղասպանության ճանաչման խնդիրը մենք կարող ենք մի կողմ դնել, ոչ թե մոռանալ՝ ինչ-որ արևել ենք նախորդ հիմնովեց տարիների ընթացքում, դա այնքան խորն է մտնել մեր և իրենց հոգեբանության մեջ, որ մեր երկխոսության համար դա իսկապես լուրջ խոչընդոտ է: Եթե դա խոչընդոտ է, ուրեմն պետք է ձգտել այն վերացնել: Եվ ցեղասպանության ներառումը մեր արտաքին քաղաքականության օրակարգում պետք է դիտվի այս «ակնոցով»: Նման

սկանան որևէ նախապայման: Հայաստանը չի գնալու փուլային լուծման: Այսինքն, հնարավոր չէ այսօրվա ստեղծված իրավիճակում վերադարձնել ինչ-որ տարածքներ՝ առանց վերջնական համաձայնության գալու Ղարաբաղի կարգավիճակի շուրջ: Այսօր մենք մեր առաջ դրել ենք երկու խնդիր: Հասնել հարցի կարգավորման, և տարածաշրջանի երկարատև խաղաղության ու կայունության: Հայաստանը և Ղարաբաղն այսօր հավատացած են և որևէ կասկած չունեն, որ Լեռնային Ղարաբաղն ունի ամբողջական իրավական, պատմական, մշակութային իրավունք լինելու անկախ պետություն կամ Հայաստանի կազմում: Եվ մենք դա կարող ենք միջազգային հանրությանն ապացուցել: Բայց մենք ասում ենք հետևյալը, մեր առջև դնելով խաղաղության ու կայունության հասնելու խնդիր, Հայաստանը դեռևս այս փուլում չի հետապնդելու Ղարաբաղի

«Մենք չենք ընդունելու բանակցությունների վերսկսման որևէ նախապայման: Հայաստանը ունի երկու խնդիր: Հասնել հարցի կարգավորման, և տարածաշրջանի երկարատև խաղաղության ու կայունության:»

անկախությունը կամ միացումը Հայաստանին: Մյուս կողմից, մենք մասն առնում ենք ասում, որ Ղարաբաղը չի կարող լինել մասն Ադրբեյջանի կազմում: Ահավասիկ, այսօր մեր նոր քաղաքականության հստակ տարրերը, որը երբեք մնան հստակությամբ չեն ներկայացվել: Մինչև հիմա մենք խոսել ենք «de jure» Ադրբեյջանի կազմում մնալու հանգամանքի և «de facto» անկախ կարգավիճակի մասին: Բայց այսօր մենք այդ չափանիշները հստակեցնում ենք, ինչ-որ չափով մասն ներառնում, այն իմաստով, որ այս փուլում չենք գնում անկախության, մյուս կողմից բացառում ենք Ղարաբաղը՝ Ադրբեյջանի կազմում: Եվ կոչ ենք անում առանց նախապայմանների մտնել կարգավիճակի շուրջ բանակցությունների, փորձենք այս երկու ծայրահեղությունների միջև գտնել մի այնպիսի կարգավիճակ, որը կբավարարի և՛ Հայաստանին, և՛ Ղարաբաղին, և՛ Ադրբեյջանին: Դա, հավանաբար, կլինի մի այնպիսի կարգավիճակ, որը կհիմնվի պայմանագրային հիմունքների վրա, իր մեջ կպարունակի հորիզոնական հարաբերությունների սկզբունքը: Սա է այսօր Հայաստանի դիրքորոշումը, և մենք գտնում ենք, որ այսօր իսկապես ստեղծվել են բարենպաստ պայմաններ: Եթե միջազգային հանրությունն ընդունի, որդեգրի այս մոտեցումը, նրանց միջոցով մենք կկարողանանք մասն Ադրբեյջանի դիրքորոշման մեջ փոփոխություն մտցնել և բանակցությունների վերսկսման միջոցով կկարողանանք հասնել Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորմանը:

մոտեցումներ մենք պետք է որդեգրենք մասն այլ խնդիրներում: Որովհետև Թուրքիան վերջ ի վերջո պետք է հասկանա, որ Հայաստանի քաղաքականությունը կլինի համարժեք իր վարած քաղաքականությանը: Պետք է դրական կամ բացասական առումով լինի երկկողմանի ճանապարհ:

Սա, ես կարծում եմ, ոչ թե կտանի հակասությունների սրման, այլ՝ որոշ ժամանակ անց կհանգեցնի հակասությունների վերացման:

6. Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորում

Վերջապես, տարածաշրջանում մեր արտաքին քաղաքականության ամենատանցքային, կարևորագույն խնդիրը Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ և արդար կարգավորումն է: Առանց այս հարցի կարգավորման, իրոք, չենք կարող հասնել այս ռեգիոնում երկարաժամկետ խաղաղության և կայունության: Այս հարցում ևս Հայաստանն ունի նոր մոտեցումներ, որն արդեն ներկայացրել է միջազգային հանրությանը: Մոտեցումը հիմնականում կայանում է հետևյալում. Հայաստանն իր մոտեցումներում լուրջ է: Լուրջ է իր ցանկության մեջ հասնել խաղաղ կարգավորման: Դրա համար էլ Հայաստանը փորձում է իրեն անվանել իրենց անուններով: Այսպես, մենք չենք ընդունելու բանակցությունների վեր-

յալակցությունները կամ միացումը Հայաստանին: Մյուս կողմից, մենք մասն առնում ենք ասում, որ Ղարաբաղը չի կարող լինել մասն Ադրբեյջանի կազմում: Ահավասիկ, այսօր մեր նոր քաղաքականության հստակ տարրերը, որը երբեք մնան հստակությամբ չեն ներկայացվել: Մինչև հիմա մենք խոսել ենք «de jure» Ադրբեյջանի կազմում մնալու հանգամանքի և «de facto» անկախ կարգավիճակի մասին: Բայց այսօր մենք այդ չափանիշները հստակեցնում ենք, ինչ-որ չափով մասն ներառնում, այն իմաստով, որ այս փուլում չենք գնում անկախության, մյուս կողմից բացառում ենք Ղարաբաղը՝ Ադրբեյջանի կազմում: Եվ կոչ ենք անում առանց նախապայմանների մտնել կարգավիճակի շուրջ բանակցությունների, փորձենք այս երկու ծայրահեղությունների միջև գտնել մի այնպիսի կարգավիճակ, որը կբավարարի և՛ Հայաստանին, և՛ Ղարաբաղին, և՛ Ադրբեյջանին: Դա, հավանաբար, կլինի մի այնպիսի կարգավիճակ, որը կհիմնվի պայմանագրային հիմունքների վրա, իր մեջ կպարունակի հորիզոնական հարաբերությունների սկզբունքը: Սա է այսօր Հայաստանի դիրքորոշումը, և մենք գտնում ենք, որ այսօր իսկապես ստեղծվել են բարենպաստ պայմաններ: Եթե միջազգային հանրությունն ընդունի, որդեգրի այս մոտեցումը, նրանց միջոցով մենք կկարողանանք մասն Ադրբեյջանի դիրքորոշման մեջ փոփոխություն մտցնել և բանակցությունների վերսկսման միջոցով կկարողանանք հասնել Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորմանը:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

-Ղարաբաղի հարցը կապված է հայ դատի հետ, թե՛ ոչ:

-Նայած թե այդ հարցին ինչպիսի մոտեցում կարելի է ցուցաբերել: Կարելի է և՛ կապել, և՛ անջատել: Պատմական, քաղաքական, իրավական առումներով՝ նայած, թե հարցին ինչպիսի տեսանկյունից ենք նայում: Այսօրվա դրությամբ, ես կարծում եմ, մեզ համար շահավետ է, որպեսզի այդ երկուսը մենք իրար հետ չկապենք: Հակառակ դեպքում մենք մասն կարողարացնենք Թուրքիայի կողմից Ղարաբաղի հարցում առաջխաղացումը որպես նախապայման արձանագրելը:

Կարծում եմ, որ այդ հարցերը իրարից պետք է անջատել, յուրաքանչյուրին ցուցաբերել առանձնահատուկ մոտեցում:

-Որքանո՞վ է ճիշտ Անդրկովկասում ունենալ երկու հայկական պետություն: Ճիշտ չի՞ լինի, արդյոք, Ղարաբաղի ժողովրդի հռչակագիրը՝ մայր հայրենիքին վերամիավորվելու համար:

-Արդեն նշեցի, որ այս փուլում պետք չէ, որ մենք դենք Ղարաբաղի անկախության կամ Հայաստանի հետ միավորման խնդիրը, որովհետև դա, իրոք, չի նպաստելու տարածաշրջանի խաղաղությանն ու կայունությանը: Փաստորեն, մենք գտնվելու ենք հավերժ պատերազմական վիճակում: Նորից եմ շեշտում՝ այս փուլում: Որովհետև, եթե Ադրբեջանը չի գնում համարժեք քայլի, եթե մի երկու-երեք տարի նրանց կողմից որևէ համարժեք պատասխան չի լինում, և մենք չենք հասնում ինչ-որ լուծման, դրանից հետո, ըստ իս, Ղարաբաղի միացումը Հայաստանին կլինի արդեն ռեալ խնդիր: Եվ դա, միգուցե, կլինի ճիշտ քայլ, որովհետև մենք չենք կարող նստել և սպասել, թե Ադրբեջանը ինչպես է ռազմականապես հզորանալու և ինչպես է Ղարաբաղը վերցնելու ռազմական ուժով: Այդ դեպքում, մեր անվտանգության երաշխիքը լինելու է Հայաստան-Ղարաբաղ միասնական միավոր լինելը, որպեսզի հնարավոր լինի դիմագրավել նման վտանգ:

Դեռևս մենք գտնվում ենք բանակցային փուլում: Կան հնարավորություններ գտնելու մի այնպիսի կարգավիճակային լուծում, որը նաև կբերի խաղաղություն, կնպաստի նաև մեր տրնտեսական խնդիրների լուծմանը: Միայն այս խնդրի ձախողումից հետո, մենք կարող ենք մըտածել արդեն խնդրի լուծման այլ մոտեցումների մասին:

-Հայաստանի տեսանկյունից ինչպե՞ս է գնահատվում Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան և Թուրքիա-Իսրայել-Ադրբեջան մերձեցումները:

-Դրանք յուրաքանչյուրի ինքնիշխան իրավունքն է: Կան այնտեղ շահերի ընդհանրություն, և այդ գործընթացները այսօրվա ստեղծված պայմաններում անխուսափելի են: Նայած, թե ինչպիսի նպատակներ են դրանք հետապնդում, միայն դրանից հետո մենք կարող ենք գնահատականներ տալ և ասել նման իրադարձությունները մեզ համար դրական, թե բացասական են: Արտաքուստ, իհարկե, կասկած չկա, որ նման գոտու ստեղծումը մեր շուրջը կարող է բացասական հետևանքներ ունենալ: Բայց այսօրվա դրությամբ իրադարձությունները այնպես են զարգանում, որ այդ երկրների շահերը համընկնում են տարբեր հարցերում, և

նման զարգացումները, պարզապես, բնական են: Մեր քաղաքականությունը պետք է լինի այն, որ կարողանանք հնարավորին չափ մեզ ներառել այդ գործընթացներում, որովհետև դրանց կանխման փորձը կարող է ավելի վատ հետևվանքներ ունենալ:

Ինչ վերաբերում է մյուս եռակողմ համագործակցությանը, ապա այնտեղ բազմիցս հայտարարվել է, որ այն որևէ երրորդ երկրի դեմ ուղղված նախաձեռնություն չէ: Ինչ նշեցի առաջին եռակողմի մասին, նույնը վերաբերում է նաև երկրորդին: Իհարկե, պետք է աշախուրջ լինել, ուշադիր հետևել այս գործընթացներին: Վերջիններս, սակայն, այնպիսի գործընթացներ են, որ Հայաստանն իր անմիջական գործունեությամբ չի կարող ինչ-որ ձևով այդ իրադարձություններում ներգործություն ունենալ:

- Ղարաբաղի հարցի լուծման Ձեր ներկայացրած տարբերակով ինչպե՞ս եք գործնականում պատկերացնում Ղարաբաղի ֆիզիկական անվտանգության ապահովումը:

-Նախ նշեմ, որ եթե լինում է քաղաքական համաձայնություն Ղարաբաղի, Ադրբեջանի և Հայաստանի միջև, այն իր մեջ պետք է նաև ներառի տարբեր մակարդակների անվտանգության մեխանիզմներ: Դա բավականին լուրջ խնդիր է: Եթե լուծումը, փաստորեն, բավարարում է բոլոր կողմերին, այդ խնդիրը ինքնուրուիքյան մի քիչ ավելի նվազ նշանակություն է ստանում: Այլ հարց է, երբ որևէ մեկին պարտադրվում է ինչ-որ լուծում: Այդ ժամանակ անվտանգության խնդիրները դառնում են շատ ավելի հրատապ: Բայց հարցի խաղաղ և համաձայնեցված կարգավորման պայմաններում անվտանգության խնդիրները մի քիչ ավելի հետին պլան են մղվում:

Սակայն, իհարկե, որևէ ռիսկի գնալու մտադրություն այստեղ չկա: Մենք հստակորեն ընտրել ենք նաև անվտանգության խնդիրը: Անկախ նրանից, թե ինչպիսի քաղաքական պայմանագիր ենք ստորագրելու, այնտեղ լինելու են տարբեր մակարդակների անվտանգության երաշխիքներ: Առաջինը, որը, կարծում եմ, ամենակարևորն է, տեղական մակարդակն է, այն է. Լեռնային Ղարաբաղը պահպանելու է իր ողջ ռազմական ներուժը, ինչպես նաև՝ Լաչինի միջանցքով Հայաստանի հետ կապի ապահովումը:

Երկրորդը՝ պայմանագրային մակարդակն է. այն, ինչ-որ նախատեսվելու է արդեն ստորագրված պայմանագրով: Դրանք են՝ բուֆերային գոտիների ստեղծումը, ժամր հրետանու հետ քաշումը, դեմոնտաժումը, և այլ մեխանիզմներ:

Հաջորդը՝ միջազգային երաշխիքների մակարդակն է, որը տրվելու է առնվազն համաախազահող երեք երկրների կողմից՝ Ֆրանսիա, ԱՄՆ, Ռուսաստան, ինչպես նաև՝ որոշ երաշխիքներ միջազգային կազմակերպությունների կողմից՝ ԵԱՀԿ և ՄԱԿ:

Իհարկե, ինչպես նշեցի, այս երեք մակարդակներից մեզ համար ամենահուսալին և կարևորը առաջինն է: Այս երեք մակարդակներով, ինչպես նաև արդեն համաձայնեցված լուրջ քաղաքական պայմանագրով, կարծում եմ, բավարար անվտանգության երաշխիքներ կլինեն բացառելու համար ռազմական գործողությունները:

-Դուք առաջարկում եք Ղարաբաղի անցումային կարգավիճակ՝ ոչ անկախ, բայց Ադրբեջանից դուրս: Այս տարբերակը շատ նման

է Սան Մարինոյի կամ Լիխտենշտեյնի տարբերակներին: Բայց դեպի ու՞ր է տանելու անցումային կարգավիճակը:

-Ես անցումային կարգավիճակից չեմ խոսել: Նշել եմ, որ սա լինելու է վերջնական բանակցված կարգավիճակ: Այսինքն Ղարաբաղը ստանալու է իր վերջնական քաղաքական-իրավական կարգավիճակը: Իսկ այդ կարգավիճակը չի լինելու Ադրբեջանի կազմում: Այն լինելու է պայմանագրային սկզբունքների վրա հիմնված, որտեղ ապահովվելու են հորիզոնական հարաբերությունները այդ երկու քաղաքական միավորների միջև:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՀՈՒՆԻՍԻ 25-ԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ

ներկայացնում է

«Երևանի զարգացման հեռանկարները»

Հունիսի 25-ին, ժամը 18:00

Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճում (5-րդ հարկ)

Մուտքն ազատ է



ԲԱՆԱԽՈՍ

«Դասախոսությունների շարք» ծրագրի տեղեկագիր

Հայաստանի ամերիկյան համալսարանի Հատուկ դասընթացների բաժին

URL:// www.aua.am/aua/extens/lectures

Ծրագրի համակարգող՝
Հրայր Զոբյան

Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58

Հասցեստեր՝